



ԳՈՀԱՐ
ՎԵՋԻՐՅԱՆ

Հնարավորություններն ու ցանկությունները անհամատեղելի են

Կարծիքները հիմնախնդրի կարգավորման շուրջ խորհրդարանում բաժանվեցին երկու մասի: Ընդդիմադիրները վրդովված են, որ կարգավորման սկզբունքները գաղտնի են պահվում, ինչը լուրջ մտահոգություն

Բազեյանի («Արդարություն») բնորոշմամբ էլ «պետք է ճանաչել Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը, այսինքն Ղարաբաղի Հանրապետությունը»: Վերջինս կարծում է, որ այսօր ազգերի ինքնորոշման խնդիրը վերածվել է տարածքների փոխանակման խնդրի, ինչն էլ մեզ տանում է փակուղի, որի պատճառով էլ շրջանառության մեջ են մտնում Մեղրիի փոխանակման եւ նմանատիպ անընդունելի այլ տարբերակներ: Մինչդեռ Ռաֆիկ Պետրոսյանի (<<Կ) կարծիքով ցանկացած դեպքում պետք է պահպանվեն Լաչինի միջանցքն ու Քելբաջարի տարածքը: Վերջինս տեղեկացրեց նաեւ, որ չի բացառվում միջազգային ուժերի տեղակայումը հակամարտու-

Մասնավորապես Մանուկ Գասպարյանը նկատեց. «Արդեջանը պետք է համակերպվի այս իրողության հետ եւ հաշտության պայմանագիր կնքի: Տարածքների փոխանակման տարբերակն անհեթեթ է, եւ Հայաստանը չպետք է գնա դրան»: Ժխտ հակառակ տեսակետն է հայտնում Հակոբ Հակոբյանը. «Ընդունելի չէ, երբ մենք ասում ենք, որ այդ հողերը մերն են եւ չենք գնում զիջումների: Տարածաշրջանում արդեն երեւում է, որ մենք այնքան էլ ուժեղ պետություն չենք, եւ զարգացած երկրները մեզանից կախման մեջ չեն: Մինչդեռ Արդեջանում կա ծով, որի գործոնը հետաքրքրություն ու շահագրգռվածություն է առաջացնում այդ պետության նկատմամբ»: Հակոբյանն առաջար-

կետն ընդունելի չէր «Արդարություն» եւ «Ազգային միաբանություն» խմբակցությունների ներկայացուցիչների համար: Այսպես Գր. Հարությունյանի համոզմամբ ոչ լեգիտիմ նախագահը թե իրավական, թե բարոյական իմաստներով իրավունք չունի ներկայանալ ժողովրդի անունից, քանի որ «Քոչարյանը չի ստացել ժողովրդի քվեն եւ անընդունելի է, որ նա վճիռ կայացնի այդ շատ կարեւոր հարցի շուրջ: Չընտրված նախագահի այդ վճիռը չի էլ ընդունվի հասարակության կողմից, ինչը հղի է լուրջ վտանգներով»: Մինչդեռ Հրանտ Խաչատրյանի կարծի-

Տեսակետներ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՃԱՆԱԳԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆԴԵՊ

Հիմնախնդրի կարգավորման հայանպաստ տարբերակներ են առաջարկում ԱԺ պատգամավորները

Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ծավալվող տարաբնույթ խոսակցություններն ու մտահոգություններն օր օրի ավելի են աշխուժանում: Մինսկի խմբի համանախագահները մեկ հայտարարում են շրջանառվող նոր փաթեթի եւ սկզբունքների մասին, մեկ էլ հորդորում, թե հիմնախնդրի կարգավորման նոր առաջարկներ, ըստ էության,

չեն լինելու: Այս իրավիճակի համատեքստում էլ փորձեցինք ԱԺ պատգամավորներից պարզել՝ 1. Ո՞րն է հիմնախնդրի կարգավորման հայանպաստ լուծումը, 2. Այսօր, երբ վիճարկվում է Քոչարյանի լեգիտիմությունը, իրավունք ո՞ւնի նա, արդյոք, նա ստորագրել կարգավորման որեւէ փաստաթղթի տակ:

ների տեղիք է տալիս (թեպետ նրանք եւս չեն պահանջում գաղտնագերծում): Մինչդեռ կոալիցիոն ուժերի հավաստմամբ ամեն ինչ կարգին է եւ մնում է ապավինել Քոչարյանի հնարամտությանն ու ցանկությանը: Պատահական չէ, որ ՀՀ, ՕԵԿ եւ ՀՅԴ խմբակցությունների ներկայացուցիչներն անհարմարության զգացում էին ունենում, երբ մատնանշվում էր նախագահի լեգիտիմության հարցը:

թյան գոտում: Եթե սա հանրապետականների համար հայանպաստ լուծում է համարվում (Գալուստ Սահակյանը եւս չբացառեց միջազգային զորքերի տեղակայումը), ապա ԱՄ-ից Աղասի Արշակյանի դիտարկմամբ «սպանվելուց հետո կապ չունի քոռ դանակով ենք մորթվել, թե մի այլ բանով: Զոհը մնում է զոհ»: ՀԴԿ-ից Արամ Սարգսյանը կարծում է, որ նախեւառաջ պետք է լուծել Լեռնային Ղարաբաղի տարածքային խնդիրը, ձեւավորել Ղարաբաղյան իրավական թղթապանակ, ապա նոր խոսել խնդրի կարգավորման մասին: «Եթե Հայաստանը չի հաստատել իր իրավունքները ԼՂ-ի հանդեպ, ուրեմն Մինսկի խումբը հարցը կքննարկի որպես Արդեջանի տարածքային ամբողջականության ներառյալ ԼՂ-ի հիմնահարց»:

կում է գնալ փոխզիջումների որոշակի տարածքների փոխանակման: «Համ էլ Ղարաբաղցիները չեն գա Երեւան, «Զիպերով» ման գան ու իրանց լավ զգան», - ամփոփում է ԱԺ պատգամավորը:

Ցանկացած փաստաթուղթ՝ միայն հանրաքվեով

Ինչ վերաբերում է մեր 2-րդ հարցադրմանը ոչ լեգիտիմ նախագահը իրավունք ունի՞ արդյոք ստորագրել հարցի կարգավորման փաստաթղթի տակ, այս դեպքում խորհրդարանը դարձյալ բաժանվեց հակադիր բանակների: Մասնավորապես ՀՀ խմբակցության ղեկավար Գ. Սահակյանը հայտարարեց. «Քոչարյանի լեգիտիմության հարցը մտացածին է եւ չի համապատասխանում իրականությանը»: Իսկ Ռ. Պետրոսյանն էլ, չգիտես ինչո՞ւ, հիշեց ՍԴ-ի որոշումը, բարձրաձայնելով, որ այդ մարմինը գերազանցել է իր լիազորությունները, ուստի հանրաքվեի գաղափարն էլ հակասահմանադրական է: ՀՅԴ խմբակցության ղեկավար Լեւոն Մկրտչյանը եւ ՕԵԿ պատգամավոր Մեխակ Մխիթարյանը եւս հավատացած են, որ «մեր նախագահի լեգիտիմությունը չի վիճարկվում»: Վազգեն Խաչիկյանի բնորոշմամբ էլ «նախագահը, որն անցել է պատերազմի բովոլ, միանշանակ կստորագրի այնպիսի փաստաթուղթ, որը կբխի մեր պետության շահերից եւ մեր պետության մեջ առկա իրավիճակի իրողություններից»: Բնականաբար, այս տեսա-

քով «եթե հասարակությունը չի վստահում Քոչարյանին, ապա պետք է բոլոր ջանքերը ներդնել կանխելու ընտրությունների հրապարակման փաստացի կեղծ արդյունքները»: Իսկ այժմ «Քոչարյանը կարող է ստորագրել փաստաթղթի տակ, եւ աշխարհը այդ փաստաթուղթը կճանաչի իրավական ուժ ունեցող»: Այլ կերպ է մտածում Ալբերտ Բազեյանը: Ըստ նրա «եթե համանախագահող երկրները ոչ հայանպաստ տարբերակի շուրջ համաձայնության գան, ապա դժվար թե կարողանանք դիմագրավել, եւ այստեղ Քոչարյանը հաստատ ոչինչ անել չի կարող»: Մանուկ Գասպարյանի դիտարկմամբ էլ «նախագահը լեգիտիմ չէ եւ ինքը գիտի այդ մասին, ուստի չի կարող այնպիսի փաստաթուղթ ստորագրել, որը մեզ դուր չգա»: «Նա հո մեր թշնամի՞ն չէ», - մեր հարցին հարցով պատասխանեց Գասպարյանը, ապա ավելացրեց. «Եթե նրան պարտադրեն, (դե, մեջքը թույլ է ժողովրդի աջակցությունը չունի), ստիպված կլինի հրաժարական տալ: Իսկ եթե ունենար ժողովրդի աջակցությունը կարող էր թքած ունենալ ցանկացած միջնորդության վրա»:

Առանձնանում է Հակոբ Հակոբյանի դիրքորոշումը. «ցանկացած փաստաթուղթ, որը կստորագրվի նախագահի կողմից, պետք է վստահության հանրաքվեով հաստատվի»: Արդյո՞ք սա չի նշանակում, որ վերջինս, մեղմ ասած, չի վստահում Քոչարյանին, Հակոբյանը նշեց «Մեկ մարդը կարող է սխալվել, բայց մի ամբողջ ազգ իրավունք չունի սխալվելու»:

Այնուամենայնիվ, մինչ հերթը հասնի Ռ. Քոչարյանի ստորագրել-չստորագրելուն, էլ ավելի կարեւոր է, թե մեր պատգամավորների կարծիքով ո՞րն է խնդրի հայանպաստ լուծումը: Եվ եթե Քոչարյանի ստորագրելու պարագայում դիրքորոշում արտահայտելիս քաղաքական ուժերը ելնում էին համապատասխան կոնյուկտուրայից, ապա հարցի կարգավորման առումով նույն ուժերը դեռ պարտադրված չէին զգում իրենց տեսակետները համաձայնեցնելու «բարձրյալի» հետ, ըստ այդմ նրանցից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացրել հարցի հայանպաստ լուծումը: Նշենք նաեւ, որ ԱԺ պատգամավորները ավելի շուտ խոսում էին ոչ թե հայանպաստ լուծման տարբերակների, այլ հնարավոր ճանաչումներից խուսափելու մասին: Այս առումով, «Արդարությունից» Գրիգոր Հարությունյանը նույնիսկ նկատեց. «միշտ չէ, որ մեր հնարավորություններն ու ցանկությունները համընկնում են»: Ըստ նրա՝ հայանպաստ լուծումն այն է, որ «հայը ինքնուրույն որոշի իր ճակատագիրը իր պայանակն հողում, պետք է նաեւ ընդհանուր սահման ունենանք Ղարաբաղի հետ»: Ալբերտ

Իսկ Վահան Հովհաննիսյանի, Արմեն Ռուստամյանի (ՀՅԴ) եւ Միքեյլ Ծախգեղյանի (ՕԵԿ) համոզմամբ էլ նպատակը Արցախի միավորումն է Հայաստանի հետ: «Դրան հասնելու իրավական ճանապարհը ԼՂ-ի ճանաչումն է որպես անկախ պետություն», - նշում է Լեւոն Մկրտչյանը (ՀՅԴ): Վազգեն Խաչիկյանն (<<Կ) էլ գտնում է, որ 1-ին Ղարաբաղը չպետք է գտնվի Արդեջանի ուղղակի ենթակայության տակ, 2-րդ Ղարաբաղը պետք է ունենա անվտանգության իրական երաշխիքներ, 3-րդ Ղարաբաղը պետք է տարածքային, կապ ունենա ՀՀ-ի հետ: Կարծիք հնչեց նաեւ, որ Հայաստանը պատերազմել է, եւ իր տարածքները հետ է վերցրել: